

«Հաստատում են»

ՎՊՄԻ ռեկտոր բ. գ. դ.

_____ գ. Խաչատրյան

«_____» _____ 2008թ.

ՎԱՆԱՉՈՐԻ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՍԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԻՆՍԻՏՈՒՏԻ

ՄԱԳԻՍՏՐԱՏՈՒՐԱՅԻ

ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

Սույն կանոնակարգը մշակված է համաձայն Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2007թ. դեկտեմբերի 6-ի «ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատություններում մագիստրատուրայի ընդունելության և ուսուցման կարգը հաստատելու մասին» թիվ 1193-Ն հրամանի:

1. Ընդհանուր դրույթներ

- 1.1 Մագիստրոսական ուսուցումը ՀՀ բարձրագույն կրթության եռաստիճան համակարգի երկորորդ աստիճանն է: Մագիստրոսական ծրագրերով մասնագետների պատրաստումը ուղղված է մասնագետների գիտահետազոտական և գիտամանկավարժական գործունեության իրականացմանը:
- 1.2 Մագիստրատուրայի հիմնական նպատակը բարձր որակավորում ունեցող մասնագետների պատրաստումն է՝ բարձրագույն ուսումնական հաստատություններում, միջնակարգ ուսումնական տարբեր հաստատություններում, գիտահետազոտական հիմնարկություններում աշխատելու համար:
- 1.3 Ուսուցումը ՎՊՄԻ-ի մագիստրատուրայում իրականացվում է ուսուցման առկա ձևով: Մագիստրատուրայում ուսման տևողությունը կազմում է 2 տարի:

- 5.2 Ամփոփիչ պետական ատեստավորման անցկացման համար ռեկտորի հրամանով ստեղծվում է ատեստացիոն հանձնաժողով:
- 5.3 Մագիստրատուրայի շրջանավարտների ամփոփիչ պետական ատեստավորումը ընդգրկում է ավարտական աշխատանքի (մագիստրոսական ատենախոսության) պաշտպանությունը և պետական քննությունը: Մագիստրոսական ատենախոսությանը ներկայացվող պահանջները որոշվում են ֆակուլտետի կողմից մշակված և ռեկտորի կողմից հաստատված մագիստրոսի ատենախոսության ձևակերպման մեթոդական ցուցումներով: Պետական քննության ծրագիրը ևս հաստատում է ֆակուլտետի խորհուրդը:
- 5.4 Ամփոփիչ պետական ատեստավորման արդյունքներով պետական ատեստացիոն հանձնաժողովը որոշում է ընդունում շրջանավարտին համապատասխան մասնագիտության մագիստրոսի աստիճան շնորհելու և պետական նմուշի դիպլոմ հանձնելու մասին:

ուսանողների ստացած տեսական գիտելիքների կիրառմանը պրակտիկ գործունեության ոլորտում՝ տարբեր ուսումնական հաստատություններում (դպրոցներում, քոլեջներում, տեխնիկայում, ուսումնարաններում և այլն): Գիտամանկավարժական պրակտիկայի բովանդակությունը որոշվում է ֆակուլտետի խորհրդի կողմից հաստատված պրակտիկայի ծրագրով:

4.2.2.3 Գիտամանկավարժական պրակտիկան նախատեսում է պրակտիկայի անցկացում միջնակարգ և միջնակարգ մասնագիտական ուսումնական հաստատություններում (դպրոցներում, քոլեջներում, տեխնիկումներում և այլն) և բուհերում:

4.2.2.4 Մագիստրանտի ատեսավորումը գիտամանկավարժական պրակտիկայից կատարվում է ամբիոնի նիստում լսվող հաշվետվության ձևով՝ հաշվի առնելով այն ուսումնական հաստատության դեկանի գրավոր կարծիքը, որտեղ կազմակերպվել է պրակտիկան:

5 Մագիստրատուրայի շրջանավարտների ամփոփիչ պետական ատեսավորում:

5.1 Մագիստրատուրայի շրջանավարտների պետական ատեսավորումը կատարվում է՝ համաձայն ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից հաստատված կարգի:

1.4 ՎՊՄԻ-ի մագիստրատուրայի ընդունելությունն իրականացվում է՝ համաձայն համապատասխան կարգի (տե՛ս համապատասխան փաստաթուղթը):

2. Մագիստրատուրայի դեկավարությունը

2.1 ՎՊՄԻ մագիստրատուրայում ընդհանուր դեկավարությունը իրականացվում է ուսումնական մասով պրոռեկտորի կողմից:

2.2 Մագիստրոսական ծրագրերի իրականացման վերահսկողությունը համապատասխան ամբիոններում իրականացվում է ամբիոնների վարիչների և ֆակուլտետների դեկանների կողմից:

2.3 Մագիստրոսական որևէ ծրագրի դեկավարումն իրականացվում է ՎՊՄԻ-ում կամ այլ բուհերում աշխատող պրոֆեսորների, գիտության դոկտորների, դոցենտների և գիտության թեկնածուների կողմից:

2.4 Մագիստրոսական ծրագրի դեկավարը (պրոռեկտորը) վերահսկում է մագիստրոսական ծրագրի ուսումնական պլանի մշակումը, դեկավարում է մագիստրոսական ծրագրի բովանդակության գիտական մասի կատարումը, որոշում է մասնագիտական առարկայախմբի բովանդակությունը, պատասխանատու է մագիստրանտի պատրաստման որակի համար, իրականացնում է մագիստրոսական ատենախոսությունների թեմաների փորձաքննական գնահատումը,

կազմակերպում է մագիստրոսական
ատենախոսությունների պաշտպանությունը և
մագիստրատուրայի գիտական դեկանավարների
գործունեության վերահսկողությունը:

2.5 Յուրաքանչյուր մագիստրանտի համար նշանակվում է գիտական դեկանավար՝ մագիստրոսական ծրագրի ուղղությամբ գիտական հետազոտություններ կատարող բարձր որակավորում ունեցող մասնագետների թվից (գիտության թեկնածուներ կամ դոկտորներ): Գիտական դեկանավարների նշանակումը իրականացվում է մագիստրատուրա ընդունվելուց հետո մեկամսյա ժամկետում՝ մագիստրոսական ծրագրի դեկանավարի (պրոֆեսորի) կողմից ներկայացնելուց և դեկանի համաձայնությունը ստանալուց հետո: Մագիստրոսական ծրագրերի գիտական դեկանավարների նշանակումը հաստատվում է ռեկտորի հրամանով:

2.6 Գիտական դեկանավարը իրականացնում է մագիստրանտի կրթական և գիտական գործունեության անմիջական դեկանավարությունը, մագիստրանտի հետ համատեղ կազմում է նրա անհատական ուսումնական պլանը, որի հաստատումից հետո ստուգում է դրա կրթական և գիտական բաղադրամասերի կատարումը: Գիտական դեկանավարն իրականացնում է մագիստրոսական

ելույթների նախապատրաստումը, ինչպես նաև փորձարարական աշխատանքը: Գիտահետազոտական պրակտիկայի բովանդակությունը որոշվում է՝ համաձայն ֆակուլտետի խորհրդի կողմից հաստատվող պրակտիկայի ծրագրի:

4.2.1.3 Գիտահետազոտական պրակտիկան կարող է անցկացվել տվյալ մասնագիտական ուղղվածություն ունեցող գիտական հիմնարկությունում, ինչպես նաև համապատասխան ամբիոնում:

4.2.1.4 Գիտահետազոտական պրակտիկայից ատեսավորումը ենթադրում է մագիստրանտի հաշվետվություն ամբիոնի նիստին՝ կատարված աշխատանքի արդյունքների մասին:

4.2.2 Գիտամանկավարժական պրակտիկա:

4.2.2.1 Գիտամանկավարժական պրակտիկայի հիմնական նպատակներն են՝

- մագիստրոսական գործունեության համար անհրաժեշտ պրակտիկ գիտելիքների յուրացումը,
- տարբեր տեսակի կրթական հաստատությունների մանկավարժական փորձին ծանոթանալը,
- մանկավարժական հետազոտությունների անցկացման մեթոդների յուրացումը:

4.2.2.2 Գիտամանկավարժական պրակտիկայի բովանդակությունն ուղղված է մագիստրատուրայի

3.11 Մագիստրատուրայի ուսանողն ընտրում է մագիստրոսական ատենախոսության թեման և աշխատում է այդ թեմայի վրա ուսուցման ամբողջ ընթացքում:

4. Գիտահետազոտական և գիտամանկավարժական պրակտիկաների կազմակերպումը:

4.1 Գիտահետազոտական և գիտամանկավարժական պրակտիկաները մագիստրոսական մասնագիտական ծրագրերի պարտադիր բաղադրամասերն են:

4.2 Պրակտիկաների անցկացման ժամկետները որոշվում են ուսումնական գործընթացի ժամանակացույցով:

4.2.1 Գիտահետազոտական պրակտիկա:

4.2.1.1 Գիտահետազոտական պրակտիկայի նպատակն է մագիստրանտների կողմից ավարտական աշխատանքի (մագիստրոսական ատենախոսության) թեմայով գիտական հիմնախնդիրների մշակման սկզբունքների և ժամանակակից մեթոդների կիրառման կարողության ձեռքբերումը, գիտական տեղեկատվության հավաքման, մշակման և օգտագործման ժամանակակից մեթոդներին տիրապետելը:

4.2.1.2 Մագիստրանտի գիտահետազոտական պրակտիկայի բովանդակությունը կարող են կազմել ուսումնասիրվող հիմնահարցին վերաբերող գրական աղբյուրների վերլուծությունը, հոդվածների, գեկուցումների,

ատենախոսության ուղղությամբ կատարվող աշխատանքները:

2.7 Մագիստրոսի անհատական ուսումնական պլանի կատարման մասով գիտական դեկավարը ենթարկվում է համապատասխան մագիստրոսական ծրագրի դեկավարին:

2.8 Յուրաքանչյուր գիտական դեկավար կարող է միաժամանակ իրականացնել ոչ ավելի քան 4 մագիստրանտների դեկավարություն:

2.9 Եթե մագիստրոսական ատենախոսության թեման միջնասնագիտական բնույթի է, ապա մագիստրանտը կարող է ունենալ նաև խորհրդատու համապատասխան ամբիոնից:

3. Ուսումնական գործընթացի կազմակերպումը և բովանդակությունը

3.1 Մագիստրատուրայում ուսումնական գործընթացը իրականացվում է պետական չափորոշչչներով մշակված ուսումնական պլաններով և ծրագրերով: Ուսումնական պլանները հաստատվում են ՎՊՄԻ-ի գիտխորհրդի կողմից, առարկայական ծրագրերը՝ համապատասխան ամբիոնների և ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտորի կողմից:

3.2 Ուսումնական գործընթացի հիմնական բովանդակությունը մագիստրանտների հիմնարար տեսական–մեթոդաբանական գիտելիքների ձեռքբերումն է և այդ հիմքի

վրա մանկավարժական, հետազոտական կարողությունների ձևավորումը, ապագա մագիստրոսների գիտական մտածելակերպի զարգացումը:

3.3 Մագիստրանտի գիտական և ուսումնական աշխատանքն իրականացվում է՝ համաձայն պրոռեկտորի կողմից հաստատված անհատական պլանի:

3.4 Ուսուցման հիմնական ձևերից են դասախոսությունները, գործնական, սեմինար, լաբորատոր պարապմունքները, կուրսային աշխատանքների կատարումը, գիտական աշխատանքների կատարումը ամբիոններում, գիտահետազոտական և մանկավարժական պրակտիկաները համապատասխան ուսումնական հաստատություններում և գիտական հիմնարկություններում, ինքնուրույն աշխատանքը և այլն:

3.5 Մագիստրոսական ծրագրով ուսուցումը ենթադրում է մագիստրանտի ակտիվ ինքնուրույն աշխատանք: Այս նկատառումով նրա միջին լսարանային բեռնվածությունը չպետք է գերազանցի շաբաթական 18 ժամը:

3.6 Անհատական ուսումնական պլանի կատարման վերահսկողության նպատակով նախատեսվում է ընթացիկ ատեսավորում ուսումնական պլանի բոլոր առարկաների համար՝ միջանկյալ ստուգումների, ստուգաքնների ու քննությունների տեսքով: Մագիստրանտի գիտելիքների

գնահատման կարգը շարադրված է առանձին փաստաթղթում:

3.7 Մագիստրոսական անհատական պլանը չկատարելու դեպքում, մագիստրանտի գիտելիքների գնահատման կարգի համաձայն, մագիստրանտը ռեկտորի հրամանով հեռացվում է մագիստրատուրայից՝ մագիստրանտի գիտական դեկավարի ներկայացմանը և ամբիոնի վարիչի, դեկանի ու մագիստրոսական ծրագրի դեկավարի հետ համաձայնեցնելուց հետո:

3.8 Ընդհանուր մասնագիտական, ընդհանուր մանկավարժահոգեբանական և կրթական հաստատությունների կառավարման առարկայախմբերի դասընթացների դասախոսությունները թույլատրվում է կազմակերպել մագիստրանտների ընդհանուր (միջֆակուլտետային) հոսքի համար:

3.9 Մասնագիտական առարկաների պարապմունքները իրականացվում են ուսումնական պլանով նախատեսված ձևերով:

3.10 Մագիստրանտների գիտական աշխատանքը իրականացվում է ուսանողի ինքնուրույն աշխատանքի ձևով՝ մագիստրանտների գիտական դեկավարմերի կողմից ընթացիկ և ամփոփիչ ստուգումների անցկացման պայմանով: